Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի նախագահին

2020 թվականի նոյեմբերի 1-ից ՀՀ արդարադատության նախարարության կողմից անհամեմատ ավելի մեծ ծավալի կարգապահական վարույթներ սկսեցին հարուցվել դատավորների, հատկապես քրեական մասնագիտացում ունեցողների նկատմամբ: Միաժամանակ 2021 թվականի հուլիս ամսից առհասարակ խափանվեց «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով որպես հիմնական միջոց սահմանված դատարաններում գործերի բաշխման համակարգչային ծրագիրը, դրանով իսկ վտանգելով օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից անաչառ քննության իրավունքը:

Ներկայացված հարցերն ունեն հանրային մեծ հետաքրքրություն: Նշվածից ելնելով առաջացել է 2020 թվականի նոյեմեբերի 1-ից մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի խոչընդոտման («Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով երաշխավորված դատարաններում գործերի բաշխման համակարգչային ծրագրի խաթարման, ինչպես նաև Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ անհամեմատ մեծաքանակ կարգապահական վարույթների հարուցմամբ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության իրավունքի վրա էական ազդեցության) փաստերը պարզելու անհրաժեշտություն:

ՀՀ Սահմանադրական կարգավորումների համաձայն, արդար դատաքննության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, որի հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պարտականությունն է: Որպես հանրային իշխանության մարմին Ազգային ժողովը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ընդ որում, հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Ազգային ժողովն իր՝ օրենսդիր իշխանությունը, ընդունված օրենքների կատարման և գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև այլ գործառույթները իրականացնելիս պարտավոր է ապահովել սահմանադրական նշված կարգավորումների անխոչընդոտ իրացումը՝ հիմնվելով իշխանության մյուս ճյուղերից անկախ գործելու և նրանց հավասարակշռելու սկզբունքի վրա:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համապատասխան դրույթներով՝ ներքոստորագրյալ պատգամավորներս ներկայացնում ենք դիմում՝

Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաև Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան և իրավասության ոլորտն է.

Դատարաններում գործերի բաշխման համակարգչային ծրագրի խաթարման ազդեցությունը անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության իրավունքի վրա: Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթների հարուցման ազդեցությունը անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության իրավունքի վրա:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն քննիչ հանձնաժողովի նախագահն է Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն, քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը՝ 4 (չորս) ամիս է:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կից ներկայացնում ենք քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (հիմնական զեկուցող «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանը):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ՝

հ/հ	անուն և ազգանուն		ստորագրություն
1.	[illegible]	078	[signature]
2.	[illegible]	080	[signature]
3.	Աղվան Վարդանյան	084	[signature]
4.	[illegible]	079	[signature]
5.	Արամ Վարդևանյան	094	[signature]
6.	[illegible]	091	[signature]
7.	[illegible]	100	[signature]
8.	[illegible]	077	[signature]
9.	[illegible]	103	[signature]
10.	[illegible]	089	[signature]
11.	[illegible]	106	[signature]
12.	[illegible]	107	[signature]
13.	[illegible]	102	[signature]
14.	Հայկ Մամիջանյան	105	[signature]
15.	Էլինար Վարդանյան	082	[signature]
16.	[illegible]	086	[signature]

17.	[illegible]	073	[illegible]
18.	[illegible]	097	[illegible]
19.	[illegible]	093	[illegible]
20.	[illegible]	092	[illegible]
21.	[illegible]	099	[illegible]
22.	[illegible]	098	[illegible]
23.	[illegible]	076	[illegible]
24.	[illegible]	095	[illegible]
25.	[illegible]	081	[illegible]
26.	[illegible]	085	[illegible]
27.	[illegible]	074	[illegible]
28.	[illegible]	088	[illegible]
29.	[illegible]	101	[illegible]
30.	[illegible]	083	[illegible]